Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
√862

1999

ԿԱՆՈՆՔ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ - ԾԽԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱՑ ՀԱՅՈՑ



ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ·

ՈՒՅԼՐ—1889

ՀՐԱՄԱՆԱՒ

ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ՄԱԿԱՐԱՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Գ 862-ա
Հֆ. 864

Հաւատն գտուել մեր ընդ կանոնադրութիւնս այս՝ որ վասն եկեղեցական-ծխական երկուսեւից միդասեան եւ երկդասեան ուսումնարանաց Հայոց՝ հաստատեմք.

Ի վերայ իսկականին ստորագրեալ է.

ՄԱԿԱՐ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

ԿԱՆՈՆՔ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ — ԾԽԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱՑ ՀԱՅՈՑ.

Ա. ՀԱՆՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՔ.

1. Եկեղեցական—ծխական ուսումնարանք Հայոց կարգեալ են առ եկեղեցեօք և վանօրէիւք ի քաղաքս և ի գեօղս ի տալ մանկանց Հայոց երկուց սեւից զՀոգևոր կրթութիւն և զսկզբունս կարևոր գիտելեաց։

2. Եկեղեցական—ծխական ուսումնարանք բացեալ լինին հրամանաւ Վեհափառ Հայրապետի ամենայն Հայոց և կառավարին ընդ ձեռն թեմական Առաջնորդաց համաձայն սոյն կանոնադրութեան և առանձին հրահանգօք Նորին Վեհափառութեան։

3. Եկեղեցական—ծխական ուսումնարանք բաժանին յերկուս կարգս—Միդասեան և Երկդասեան։

4. Ժամանակ ուսման աշակերտաց և աշակերտուհեաց սահմանի՝ վասն առաջնոյ կարգի՝ ոչ պակաս քան զերիս ամս, իսկ վասն երկրորդին՝ ամս հինգ։

5. Եկեղեցի, որ սղութեամբ արդեանցն անձեռնհաս լինի պահել զառանձինն Ուսումնարան, ըստ կարգադրութեան Առաջնորդի՝ կարէ օժանդակել պահպանութեան այլում ուսումնարանի։

ԳՐՈՒ ԱՐՔԱՅԻ

6. Միմեանց մերձաւոր գիւղօրայք, գումարելով ի մի զեկեղեցական և զժողովրդական գումարս իւրեանց, կարեն պահել զմի կենարանական ուսումնարան, զորոյ զտեղին ընտրեսցէ Առաջնորդն։

7. Եկեղեցական — ծխական ուսումնարանք աղայոց և օրիորդաց պարտին լինիլ օրիշք ի միմեանց՝ թէպէտ և երկոքին ևՀ գտանիցին ի նմին գաւթի Եկեղեցւոյ։

8. Ամենայն Եկեղեցական — ծխական ուսումնարանք պարտին ունիլ զկնիք ըստ որոշեալ ձևոյ, որ պահպանի միշտ առ նախագահս հոգաբարձութեանց։

9. Եկեղեցական — ծխական ուսումնարանք Հայոց միդասեանք և երկդասեանք ըստ կանոնադրութեան զինուորագրութեան վայելեն զարտօնութիւնս չորրորդ կարգի ուսումնարաց համա-

ձայն «Թ» յաւելուածոյ ԾԳ. յօդուածոյ զինուորագրական կանոնադրութեան։ (IX приложеніе къ 53 статьъ устава воинской повинности. 1888 г.)

10. Ուսուցիչք եկեղեցական—ծխական ուսումնարաց, եթէ վիճակահանութեամբ պարտաւորեսցին գնալ ի զինուորութիւն, ազատք են յիսկական զինուորական ծառայութենէ, և համարին ի կարգի պահեստի զօրաց յընթացս հնգետասան ամաց. իսկ եթէ գտցին ի պաշտաման ուսուցչութեան անընդհատ զամն վեց և ցուցցեն ամ ըստ ամէ զվկայագիր պաշտօնավարութեան իւրեանց, իսպառ ազատին ի զինուորական հարկէն։ (Уст. воинск. повинности ст. 63 изд. 1888 г.)

Բ. ՑԱՂԱԳՍ ԱՌԱՋՆՈՐԴԱՑ.

11. Առաջնորդք վիճակաց՝ ի խնդրել ի Վեհափառ Հայրապետէն զիրա-

ուունս բանալոյ զեկեղեցական—ծխական ուսումնարանս՝ ի նմին յայտարարութեան պարտին ծանուցանել Նորին Վեհափառութեան, թէ յորմէ՞մ տեղւոջ և որպիսի ուսումնարան կամիցին բանալ և որո՞վ արդեամբ պահպանեսցին այնոքիկ։

12. Եկեղեցական—ծխական ուսումնարանք պահպանին եկեղեցական արդեամբքը, թոշակօք աշակերտաց և աշակերտուհեաց, և կամաւոր նուիրանօք ժողովրդեան ըստ կարգադրութեան Առաջնորդաց։

13. Առաջնորդք տան հրաման գործադրելոյ զմասն ինչ յեկեղեցական արդեանց եկեղեցւոյն, իսկ ժողովուրդըն յանձն առնու վաւերացեալ համախօսական թղթով լրացուցանել ըզգումարն, որ պիտոյ իցէ ի պահպանութիւն ուսումնարանին։

14. Եթէ դիպեսցին պատճառք արգելառիթք պահպանութեան միոյ իրիք յուսումնարաց, առաջնորդք յետ զամենայն հնարս ի գործ դնելոյ՝ տնօրինեն զարժանն և անյապաղ ծանուցանեն Նորին Վեհափառութեան զկարգադրութենէ իւրեանց:

15. Առաջնորդք առաջի առնեն ըզհոգաբարձունս և զինամակալս ի հաստատութիւն Վեհափառ Հայրապետի:

16. Առաջնորդք զկարգմանէ և զարձակմանէ ուսուցչաց և ուսուցչուհեաց յայտնեն անյապաղ Վեհափառ Հայրապետին:

17. Առաջնորդք զմերձաւոր հսկողութիւն ի վերայ ուսումնարական գործոց ի գաւառսն առանձին հրահանգաւ յանձնեն փոխանորդաց իւրեանց, որք աջակցեն հոգաբարձութեանց և աւագ ուսուցչաց, յաճախեն յուսում-

նարանս ի ժամ դասախօսութեանց, նախագահեն ի ժամ հանդիսակատարութեանց և հարցաքննութեանց, և զամենայն դիտողութիւնս իւրեանց զբարոյական և զուսումնական ընթացից և զտնտեսական վիճակէ ուսումնարանաց մատուցանեն առաջնորդաց։

18. Առաջնորդք ըստ նկատողութեան իւրեանց կարգեն հոգաբարձու զմի ոմն ի քահանայից, որ է միանգամայն և նախագահ հոգաբարձութեան։

19. Առաջնորդք կարգեն զաւագ ուսուցիչն և զաւագ ուսուցչուհիս և հաստատեն ի պաշտաման զուսուցիչս և զուսուցչուհիս, զառաջարկեալսն յաւագ ուսուցչէ։

20. Առաջնորդք հաստատեն զարձանագրութիւնս մանկավարժական խորհրդոց յաղագս արգեանց տարեկան հարցաքննութեանց։

21. Առաջնորդք յաւարտ ուսումնական տարւոյ զամենայն զտեղեկագիրս՝ վերաբերեալս համօրէն ուսումնարաց վիճակին մատուցանեն Վեհափառ Հայրապետին՝ հանդերձ դիտողութեամբ իւրեանց զգործադրութենէ կանոնացս, զընթացից ուսման և զարնտեսական վիճակէ նոցին ոչ անագան քան ցվերջ յուլիսի։

22. Առաջնորդք, եթէ կամիցին տալ իրաւունս ի կիր արկանելոյ զդասական մատեանս, եղեալս արտաքոյ հաստատեալ ցուցակին, պարտին նախ առաքել զմի օրինակն նորոյ մատենին հանդերձ դիտողութեամբք իւրեանց և հայցել զհաստատութիւն նորին Վեհափառութեան։

Գ. ՑԱՂԱԳՍ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԱՑ.

23. Երկդասեան եկեղեցական-ծխական ուսումնարանք թէ ի քաղաքս և

թէ ի գիւղօրայս ունիցին զչորս հոգաբարձուս՝ երկոքուքքն անձնափոխանորդօք· առաջին ի հոգաբարձուաց լիցի մին ի քահանայից՝ ըստ որոշման Առաջնորդի, երկրորդն՝ երեցփոխանն եկեղեցւոյն, իսկ երկուքն հանդերձ անձնափոխանորդօք ընտրեսցին ի ծխականաց նոյն եկեղեցւոյ եռամեայ ժամանակաւ։

24· Միդասեան եկեղեցական-ծխական ուսումնարանք թէ ի քաղաքս և թէ ի գիւղօրայս ունիցին զերիս հոգաբարձունս՝ միով անձնափոխանորդաւ· առաջինն ի հոգաբարձուաց լիցի մին ի քահանայից՝ ըստ որոշման Առաջնորդի· երկրորդն՝ երեցփոխան եկեղեցւոյն, իսկ երրորդն հանդերձ անձնափոխանորդաւ ընտրեսցի ի ծխականաց եռամեայ ժամանակաւ։

25· Հոգաբարձուք եկեղեցական-ծխական կենտրոնական ուսումնարա-

նաց ի գիւղօրայս լիցին՝ քահանայն ըստ որոշման Առաջնորդի և երեցփոխան եկեղեցւոյ գեղջն, յորում գտանի կենտրոնական ուսումնարանն, նոյնպէս և երեցփոխանք այնց եկեղեցեաց, որոց ծխականք՝ ըստ կարգադրութեան Առաջնորդի նպաստեն պահպանութեան այնր ուսումնարանի եկեղեցական կամ ժողովրդական արդեամբք։

26. Քահանայ հոգաբարձուն է վիանգամայն և նախագահ հոգաբարձութեան։

27. Հոգաբարձուք զմի ոմն յանդամոց իւրեանց կարգեսցեն գանձապահ փոխադարձ երաշխաւորութեամբ իւրեանց։

28. Ընտրութիւն հոգաբարձուաց և անձնափոխանորդաց լինի հրամանաւ Առաջնորդաց ընդ ձեռն փոխանորդաց և գործակալաց ի գաւիթս եկեղեցեաց ըստ այսմ եղանակի։

ա. Ուսուցիչ ինչ յառաջ փոխանորդք կամ գործակալք տան կազմել ընդ ձեռն ծխատէր քահանայից այնր եկեղեցւոյ, յորոյ անուն բացեալ լինի ուսումնարանն, ցուցակս ծխականաց իւրեանց, հասելոց ի չափ ամաց, ոչ պակաս քան զ25. ապա ծանուցմամբ յեկեղեցւոջ և առանձին հրաւիրական թերթիւ կոչին ցուցակագրեալ ծխականքն յընտրութիւնն պատգամաւորաց։

Մանօր. Ժամաւորք չունին իրաւունս մասնակցել յընտրութիւն պատգամաւորաց։

Բ. Ի լինիլ ժողովոյն փոխանորդն կամ գործակալն ի ներկայութեան ծխատէր քահանայից՝ ըստ նախայիշեալ ցուցակի որոշեսցէ զընտրողսն և եթէ թիւ առաջիկայիցն իցէ առաւել քան զմի մասն ի հնգից համօրէն ցուցակա-

գրելոցն, լինի ընտրութիւն պատգամաւորաց ի միջոյ չափահաս ծխականաց նոյն եկեղեցւոյ։

գ. Թիւ պատգամաւորաց որոշի այսպէս, յառաջին հարիւրոց ծխոց եկեղեցւոյն (և ոչ ժամաւորաց) ընտրին անձինք հինգ, ի մնացեալ հարիւրոց յիւրաքանչիւրոցն անձինք երկուք։

Մանր. Ծխականք թուով պակաս քան զհարիւրն ընտրեն պատգամաւորս հինգ, և պակաս քան զերկու հարիւրն՝ ընտրեն պատգամաւորս եօթն և այլն։

դ. Եթէ վասն սակաւ գոլոյ թուոյ ընտրողաց խանգարիցի ընտրութիւն պատգամաւորաց յառաջնում նուագի, հրաւիրեսցին ծխականք ի կրկին գումարումն՝ զկնի եօթնեկի միոյ. եթէ ի կրկնելն ևս ոչ լիցի ընտրութիւնն՝ միմիայն զանցառութեամբ ծխականաց, առաջնորդն տնօրինեսցէ զարժանն առ

ի կառավարել զգործս ուսումնարանին, յետ նախապէս առնլոյ զհաճութիւն Վեհափառ Հայրապետի։

Է. Պատգամաւորք յետ ընտրութեան իւրեանց՝ զկնի եօթնեկի միոյ գումարին ի գաւիթ եկեղեցւոյ ընդ նախագահութեամբ փոխանորդաց կամ գործակալաց և ընտրեն զսահմանեալ թիւ հոգաբարձուաց և անձնափոխանորդաց ի միջոյ ծխականաց (և ոչ ժամաւորաց) նոյն եկեղեցւոյ։

Ը. Ծողով պատգամաւորաց ճանաչի օրինաւոր, եթէ առաջիկայ գոտանիցի 3/4 ընդհանուր թուոյ նոցին։

Ծանօթ. Յետ ընտրութեան հոգաբարձուաց իրաւունք պատգամաւորաց համարի ընդ միշտ լուծեալ։

29. Ծխականք, որք ունին ի վարձու զկալուածս եկեղեցւոյն և ուսումնա-

բանին կամ օրինաւոր դաշամբք և մուրհակաւք կրեն պարտաւորութիւնս ինչ առ այնոսիկ, զրկին յիրաւանց ընտրեալ լինելոյ ի պաշտօն հոգաբարձուի։

30. Ուսուցիչք այնոցիկ ուսումնարանաց, որոց վասն ընտրին հոգաբարձուք, չունին իրաւունս ընտրող և ընտրելի հանդիսանալոյ ի ժողովսն։

31. Ցընտրութիւն հոգաբարձուաց ուսումնարանացն, որք ընդունին նրպաստս յայլոց եկեղեցեաց, զումարին պատգամաւորք եկեղեցւոյն, յորոյ անուն բացեալ լինի ուսումնարանն. ընդ պատգամաւորացն մասնակցին և երեցփոխանք այնոցիկ եկեղեցեաց, որք մատակարարեն նպաստս, և ապա լինի ընտրութիւն հոգաբարձուաց ի ծխականաց միացեալ եկեղեցեացն։

32. Եկեղեցական - ծխական ուսումնարանք, որք պահպանին յատուկ

խնամակալաց՝ կառավարեսցին ընդ ձեռն նոյն խնամակալաց ընդ նախագահութեամբ քահանայի՝ զոր խնամակալք միջոցաւ Առաջնորդի առաջարկեն ի հաստատութիւն Վեհափառ Հայրապետի։

33. Հոգաբարձուք եկեղեցական—ծխական ուսումնարանաց ի մտանելն ի վարումն պաշտաման կազմեն զնախահաշիւ մատակարարութեան տարեկան ծախուց առ եռամեայ ժամանակամիջոցն պաշտօնավարութեան իւրեանց և յետ ընդունելոյ յԱռաջնորդէն զհաստատութիւն այնորիկ՝ վարին ըստ ամենայնի համաձայն այնր նախահաշուոյ։ Փոփոխութիւնք յայսմ նախահաշուի կարեն լինիլ գիտութեամբ Առաջնորդի և այն՝ ի կարի բացառական դէպս։

34. Յաւարտ ուսումնական տարւոյ հոգաբարձուք մատուցանեն Առաջնոր-

դաց զտարեկան հաշիւս մուրց և ծախուց ուսումնարանաց ընդ ձեռն փոխանորդաց կամ գործակալաց։

35։ Հոգաբարձութիւնք ուսումնարանաց փոյթ ունիցին, զի ըստ չափու կարողութեան գտանիցին յիւրաքանչիւր ուսումնարանս գրադարանք և զանազան ուսումնական և դասական պիտոյք։

36։ Հոգաբարձուք փոյթ ունին առհասարակ զուսումնական պիտոյից ուսումնարանաց։ մանաւանդ պարտ է նոցա հոգալ, զի դիւրագին մատակարարեսցեն աշակերտելոց զայնոսիկ պիտոյս, որոց վասն ընդունին առանձին տուրս յաշակերտելոց։

37։ Հոգաբարձութիւնք ունին ստանալ յԱռաջնորդաց զերկուս ժապաւինեալ տպագրեալ մատեանս, յորոց ի միում ցուցակագրեսցին ամենայն կահք

և կարասիք ուսումնարանաց, ևս և գրեան և այլ ուսումնական պիտոյք և ի միւսումն՝ նշանակեցին դրամական մուտք և ծախք ուսումնարանաց։

38. Հոգաբարձուք կամ անձնափոխանորդք յընթացս պաշտօնավարութեան չունին իրաւունս ի վարձու առնուլ զկալուածս և անձամբ շահեցուցանելոյ զգումարս եկեղեցւոյն և ուսումնարանին։

39. Ռոճիկ համարէն պաշտօնէից սահմանի ի հոգաբարձուաց ըստ հաստատութեան թեմական Առաջնորդաց, հայելով ի դրամական կարողութիւն ուսումնարանին։

40. Ցաւարտ պաշտօնավարութեան իւրեանց հոգաբարձուք յանձնեն նորոգ ընտրելոցն զամենայն կայս և զգոյս, հաշուեմատեանս և զմնացորդ գումարս ուսումնարանին. և եթէ լիցի կորուստ

ինչ յընթացս պաշտօնավարութեան իւրեանց ի գումարաց և ի կայից ուսումնարանին, պարտաւորին յանձանց վճարել փոխադարձ երաշխաւորութեամբ։

Դ. ՑԱՂԱԳՍ ՈՒՍՈՒՑՉԱՑ.

41. Ամենայն ոք, որ կամիցի նուիրել զանձն ի կոչումն մանկավարժական և կարգիլ ի պաշտօն ուսուցչութեան ի ծիսական-եկեղեցական ուսումնարանս Հայոց, պարտի խնդրամատոյց լինիլ յանուն Նորին Վեհափառութեան, կցելով ընդ խնդրագրոյն զվկայական ուսման, և սա և ծանուցանելով զանցեալ գործունէութենէ իւրմէ։

42. Այնպիսիք միայն կարգին ի պաշտօն ուսուցչութեան, որք մուծեալ լինին յընդհանուր ցուցակ ուսուցչաց և ուսուցչուհեաց, հաստատեալ ի Վեհափառ Հայրապետէ։

43. Մուծեալքն յընդհանուր ցուցակ ուսուցչաց և ուսուցչուհեաց յընտրելն ինքեանց տեղի պաշտօնավարութեան ի ծխական եկեղեցական ուսումնարանս ըստ իւրաքանչիւր թեմի՝ մատուցանեն խնդիր առաջնորդի այնր թեմի, յորում գտանի ուսումնարանն:

44. Ուսուցիչք և ուսուցչուհիք, որք կամին ծառայել յուսումնարանս՝ պահպանեալս ընդ ձեռն խնամակալաց, մատուցանեն խնդիր յանուն նախագահի նոցին, որ և առաջի առնէ խնամակալաց յընտրութիւն և ի հաստատութիւն, և զկարգմանէ ուսուցչաց և ուսուցչուհեաց ծանուցանէ առաջնորդի թեմին: Նոյնպէս լինի և նշանակութիւն աւագ ուսուցչի և աւագ ուսուցչուհւոյ:

45. Ընտրութիւն ուսուցչաց և ուսուցչուհեաց լինի յընդհանուր ցու-

ցակէն, հաստատելոյ ի Վ.Եհափառ Հայրապետէ, ըստ այսմ եղանակի։

ա. Թեմական առաջնորդն, ընտրելով յընդհանուր ցուցակէն, կարգէ զմի ոմն յարժանաւորաց ի պաշտօն աւագ ուսուցչի կամ աւագ ուսուցչուհւոյ և յանձնէ նմա հրաւիրել զուսուցիչս և զուսուցչուհիս վասն նշանակեալ տեղւոյն։

բ. Աւագ ուսուցիչն կամ ուսուցչուհին յետ խորհրդակցելոյ ընդ տեղական հոգաբարձուաց ընտրէ զուսուցիչսն և զուսուցչուհիս յընդհանուր ցուցակէն և առաջարկէ ի հաստատութիւն թեմական Առաջնորդին,

46. Ոչ է մարթ երկուց ուսումնարանաց կարգել զմի աւագ ուսուցիչ կամ զմի աւագ ուսուցչուհի։

47. Աւագ ուսուցչին կամ աւագ ուսուցչուհւոյն յանձն լինի մերձաւոր

հսկողութիւն ուսումնարանի ըստ ուսումնական և բարոյական մասին, այն է.

ա. Հսկել ի վերայ կանոնաւոր և արդիւնաւէտ դասաւանդութեան ուսուցչաց և ուսուցչուհեաց.

բ. Հրահանգել զաշակերտեալս ի բարոյական դաստիարակութեան և ի վարքս պարկեշտութեան.

գ. Նախագահել մանկավարժական խորհրդոց.

դ. Անթերի ի կատար ածել զամենայն կանոնս և զհրահանգութիւնս և զծրագիր ուսմանց, որ տուեալ է եկեղեցական-ծխական ուսումնարանաց ի գործադրութիւն.

է. Պահել զցուցակ աշակերտելոց.

զ. Առաջի առնել Առաջնորդին և հոգաբարձութեանն զկիսամեայ համա-

ռօտ տեղեկագիր ի Յունուար ամսեան և զտարեկան մանրամասն տեղեկագիր ի Յունիս ամսեան.

Է. Տանել խմբովին զաշակերտեալս յեկեղեցի ի կիւրակէս և ի տօնական աւուրս հանդերձ ուսուցչօք և ուսուցչուհեօք, նախապէս բացատրելով աշակերտելոցն ղիտորհուրդ աւուրն.

Ը. Հսկել, զի պահպանեսցին ի կանոնաւորութեան օրագրական մատեանքն և ցուցակք աշակերտելոց.

Ը. Ցաւարտ իւրաքանչիւր ամի զամենայն թուղթս և զմատեանս՝ եղեալս ի ձեռս իւր յընթացս ուսումնական տարւոյ, յանձնել հոգաբարձութեան առանձին ցուցակաւ.

Ժ. Պատրաստել զվկայականս ուսման և ստորագրութեամբ նախագահի հոգաբարձութեան և իւր ինքեան և վա-

ւերացուցեալ ուսումնարանական կրնքով, անցուցանել յառանձին մատեան ուսումնարանին, և տալ ծնողաց մանկտւոյն կամ խնամակալաց նոցա՝ ստորագրութեամբ ընդունողացն ի մատենին։

Ե. ՑԱՂԱԳՈՒ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՑ։

48. Խնդիրք զբաղմանց մանկավարժական խորհրդոյ են.

ա. Ընտրութիւն աշակերտելոց յետ նախընթաց հարցաքննութեանց.

բ. Արձակումն աշակերտելոց յընթացս ուսման և յետ աւարտից ուսման.

գ. Տեղափոխութիւնք աշակերտելոց ըստ յառաջադիմութեան.

դ. Ընտրութիւն դասապրոց ի հաստատեալ ցուցակէ, և այլ ուսումնա-

կան պարագայից, նմանապէս և ընտրութիւն մատենից ի պէտս գրադարանի.

Է. Կազմութիւն ցուցակի տարեկան հարցաքննութեանց.

Ը. Համարատուութիւնք ուսուցչաց և նկատողութիւնք ըստ ամենայն յառաջադիմութեան և վարուց աշակերտելոց.

Է. Հայթայթումն հնարից, զի մի ծանրաբեռնեսցին աշակերտաւորքն և եթէ մարթ իցէ, ազատք լիցին ի ոնական պարապմանց քան զկարն իւրեանց.

Ը. Արժանացուցանել վկայականի ուսման զամենայն աւարտողն ընթացից մի և երկդասեան ուսումնարանաց։

Զ. ՑԱՂԱԳՍ ԱՇԱԿԵՐՏԱՑ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԵԱՑ։

49. Թիւ աշակերտելոց յիւրաքանչիւրում բաժանման պարտի լինիլ ոչ աւելի քան զվաթսուն, իսկ եթէ ըստ պիտոյից տեղւոյն հարկ լիցի միաւորել ի միում սենեկի զերկուս կամ նաև զերիս բաժանմունս, յայն դէպս իսկ՝ թիւ աշակերտաց կամ աշակերտուհեաց ոչ կարէ առաւելուլ քան զվերոյգրեալն։

50. Ի պահանջել հարկին մարթ է բանալ առ միում միում բաժանման զուգընթացս հանդերձ առանձինն ուսուցչօք կամ ուսուցչուհեօք։

51. Ցառաջնումն բաժանման առաջնոյ դասարանի եկեղեցական-ծխական ուսումնարանաց ընկալեալ լիցին մանկունքն, որոց հասակ իցէ ոչ պակաս քան զութ ամ և ոչ աւելի քան զտասն,

և ըստ այսմ համեմատութեան ի յաջորդ բաժանմունս։

52. Ցանկացողք մնանել յուսումնարան՝ մատուցանեն նախագահի հոգաբարձութեան ընդ խնդրագրոց ըստ վկայական ծննդեան։

53. Ժամանակ ընդունելութեան աշակերտաց և աշակերտուհեաց է երկիցս ի տարւոջ, այսինքն ի սկիզբն տարեկան ուսմանց և ի Յունուարի։

54. Աշակերտք և աշակերտուհիք, որք մտանիցեն ի Յունուար ամսեանն, պարտին պատրաստ լինիլ տալ քննութիւն յընթացիս առաջին կիսամեկի։

55. Աշակերտք և աշակերտուհիք ընդ ուսուցչաց և ընդ ուսուցչուհեաց իւրեանց հաղորդին Ս. Խորհրդոյ գէթ միանգամ ի տարւոջ յաւուրս տօնից Ս. Յարութեան Տեառն։

56. Իւրաքանչիւր ոք յաշակերտելոց հատուցանէ ուսումնարանին զնշանակեալ ի հոգաբարձութենէ գումար յաղագս ուսման։

57. Իւրաքանչիւր ոք յաշակերտելոց ընդունի յուսումնարանէն զամենայն ուսումնական պիտոյս (այն է, դասագիրս, տետրակս, թուղթս, կապարագրիչս, գրիչս և այլն), վճարելով զվիճանուագ սահմանեալ առ այն տարեկան չափաւոր տուրս յօգուտ ուսումնարանին։

58. Աշակերտեալք, որք են ի վկայեալ չքաւորաց, ըստ կարգադրութեան հոգաբարձութեան ազատ լինին յուսումնահարկէ և յայլոց տրոց կամ ամբողջովին և կամ մասամբ։

Է. ՑԱՂԱԳՍ ՈՒՍՄԱՆ։

59. Ցեկեղեցական—Մխական ուսումնարանս Հայոց աւանդին ուսմունք սահմանեալք առանձին ծրագրաւ։

60. Դասաւանդութիւն առարկայից լիցի Հայ լեզուաւ, բաց ի Ռուսաց լեզուէ, ի Ռուսաց պատմութենէ և յաշխարհագրութենէ Ռուսաստանի, որք աւանդին Ռուս լեզուաւ։

Մանաւն. Պատմութիւն Ռուսաց և աշխարհագրութիւն Ռուսաստանի աւանդին յայնոսիկ ուսումնարանս, յորս աւանդին ընդհանուր պատմութիւն և ընդհանուր աշխարհագրութիւն։

61. Ցաւարտ ընթացիչ ուսման աշակերտաց և աշակերտուհեաց լիցի՛ հարցաքննութիւն առաջի հոգաբարձուաց և ծնողաց աշակերտելոցն։

62. Մանկունք՝ որք յառաջադէմ երևեսցին ի հարցաքննութիւնս, տեղափոխեսցին ի յաջորդ բաժանմունս և աւարտողքն ընկալցին զվկայական ուսման։

63. Աշակերտք և աշակերտուհիք, որք ոչ յառաջադիմեսցեն, կարեն մընալ ամ մի և ս ի նմին բաժանման։

64. Յաւարտ հարցաքննութեան կազմեսցի արձանագրութիւն ստորագրութեամբ նախագահի հոգաբարձութեան, ուսուցչաց և ուսուցչուհեաց, յորում նշանակին արդիւնք հարցաքննութեան և անուանք աշակերտաց և աշակերտուհեաց՝ որք արժանաւորք իցեն փոխադրութեան կամ վկայագրոյ, և ս և անուանք աշակերտաց կամ աշակերտուհեաց՝ մնացելոց ի նոյն բաժանմունս, կամ իսպառ արձակելոց յուսումնարանէն, և արձանագրութիւնն այն առաքեսցի ի հաստատութիւն Առաջնորդի, որ վաւերացուցեալ զկանոնաւորութիւն այնորիկ՝ յետս դարձուսցէ ի դործադրութիւն և ի պահպանութիւն յուսումնարանին։

65. Ժամանակ ամառնային արձակուրդի որոշեսցի ի քաղաքս ի 15-էն Յունիսի ցՀՕ Օգոստոսի, իսկ ի գիւղս՝ ըստ սահմանի ըստ տեղական հանգամանաց, այն է՝ ի ժամանակի հնձոց, այդեկիթից՝ ըստ որոշման հոգաբարձութեան, զոր միանգամ ընդ միշտ հաստատեսցէ Առաջնորդն։

66. Աշակերտք և աշակերտուհիք եկեղեցական—ծխական ուսումնարանաց արձակին յաւուրս կիւրակէից և տօնից՝ նշանակելոց յառանձին ցուցակի՝ հաստատելոյ ի Վեհափառ Հայրապետէ ամենայն Հայոց։